ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Ընտանիքի դերը երեխայի սոցիալականացման գործընթացում

Հետազոտող ուսուցիչ՝ Կարինե Կարեյան

Գավառի Գեորգի Մնացականյանի անվան թիվ 7 միջնակարգ դպրոց

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն…….3

Գլուխ 1. Ընտանիքի գործառույթները□□□

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը. Արդի ժամանակաշրջանում «ընտանիք» սոցիալական ինստիտուտի կառուցվածքային և գործառույթային փոփոխությունների ոչ ճիշտ գիտակցումը, սերունդների միջև հայացքների ու չափանիշների տարբերությունները հանգեցնում են դաստիարակչական լուրջ հիմնախնդիրների, որոնց հաղթահարման համար անհրաժեշտ է սոցիալ-մանկավարժական, հոգեբանական աջակցություն ընտանիքներին,որոնք կբարելավեն ընտանիքում միջսերնդային փոխաբերությունների բնույթը և հնարավորություն կընձեռեն հաղթահարել ընտանեկան դաստիարակության ոլորտում առաջացած հիմնախնդիրները:

Հետազոտական աշխատանքի նպատակը . ՈՒսումնասիրել ընտանիքում միջսերնդային փոխհաբերությունների բնույթն ու առանձնահատկությունները, վեր հանել վերջինիս դերն ու նշանակությունը երեխայի սոցիալականացման գործում:

Նպատակից բխում են հետևյալ ***խնդիրները*** ՝

1. ուսումնասիրել ընտանիքը որպես անձի սոցիալականացման առաջնային ինստիտուտ,
2. բնութագրել ընտանիքի գործառույթները,
3. ներկայացնել ընտանիքի դերը երեխայի սոցիալականացման գործընթացում,
4. ուսումնասիրել և ներկայացնել ծնող-ծնող, ծնող-երեխա, երեխա-երեխա, միջանձնային փոխհարաբերություններն ընտանիքում,
5. ուսումնասիրել և վերլուծել ավագ և միջին սերունդների փոխհարաբերությունների դերը երեխայի սոցիալականացման գործընթացում:

Հետազոտության օբյեկտը «ընտանիք» սոցիալական ինստիտուտն է, իսկ ***առարկան***՝ երեխայի սոցիալականացման գործընթացում ներընտանեկան միջսերնդային փոխհարաբերությունները:

ԳԼՈՒԽ 1. ԸՆՏԱՆԻՔԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Ընտանիքը իրականացնում է անձի ձևավորման գործում կարևոր գործառույթ: Այն հիմք է ստեղծում սոցիալական և կենսաբանական էակների արտադրության և վերարտադրության համար: Ընտանիքը մեծ դեր է խաղում երեխաների սոցիալականացման և գաղափարախոսության զարգացման գործում: Ծնողների տեսանկյունից ընտանիքի նպատակը սերունդների շարունակությունը ապահովելն է, երեխաներ ծնելը, սոցիալակացնելն ու գաղափարախոսությամբ դաստիարակելը: Սակայն երեխաներ ունենալը ընտանիքի միակ գործառույթը չէ: Այն ապահովում է սոցիալականացումը, սեռական, աշխատանքային դաստիարակությունը, մարդկանց միջև միջանձնային հարաբերությունների ստեղծումը, որն անհրաժեշտ է հասարակության համար տնտեսապես արդյունավետ ընտանիքի ձևավորման և որպես անձ լիարժեք կայանալու գործում:

Գոյություն ունեն ընտանիքի գործառույթների տարբեր ձևակերպումներ ու դասակարգումներ:

Այսպես Գ.Մ.Սվերդկովը և Վ.Ա. Ռյասենցևը որպես կարևորագույն գործառույթներ նշում են տոհմի շարունակման դաստիարակչական, տնտեսական ու փոխօգնության գործառույթները:[1]

Ս.Դ.Լապտենկոյի կարծիքով ընտանիքի հիմնական գործառույթները պետք է համարել սոցիալ-կենցաղային, վերարտադրության, իր անդամների դաստիարակչական և ժամանցի կազմակերպման գործառույթները:[2]

Ն.Գ.Յորկևիչն ընդգծում է հոգևոր հաղորդակցման միջսեռային, մանկածնության, դաստիարակության գործընթացում համագործակցության, տնային տնտեսության վարման և անհրաժեշտ միջոցների հայթայթման, ժամանցի կազմակերպման, բարոյական ու նյութական փոխադարձ աջակցության կարևորագույն նշանակությունը:[3]

Այսպիսով, հետազոտողների մեծամասնության հայացքները համընկնում են այն հարցում, որ ընտանիքի կարևորագույն գործառույթներից են

---

[1] Վ. Գրիգորյան, «Ժամանակակից ընտանիքի սոցիալ-մանկավարժական ներուժը» Մանկավարժություն, Եր.2005 էջ 238
[2] Նույն տեղում:
[3] Վ. Գրիգորյան, «Ժամանակակից ընտանիքի սոցիալ-մանկավարժական ներուժը» Մանկավարժություն, Եր.2005 էջ 239

վերարտադրողական, դաստիարակչական, տնտեսական, սկզբնական սոցիալականացման և սոցիալական վերահսկողության, հոգևոր հաղորդակցման գործառույթները: (Տե՛ս, գծապատկեր 1, էջ 5):

Գծապատկեր 1.



Տնտեսական գործառույթ.

Ընտանեկան կյանքի նյութական հիմքը ձևավորվում է **տնտեսական** գործառույթի իրականացման միջոցով: Ընտանիքում տնտեսական գործառույթի իրականացման առանձնահատկությունները կապված են փոխհարաբերությունների բնույթի հետ: Այն է՝ տնտեսական-կենցաղային աշխատանքի արդար բաշխումը ծնողների և երեխաների միջև, որը, որպես կանոն, ուղղված է ամուսնական հարաբերությունների ամրապնդմանը և երեխայի աշխատանքային դաստիարակությունը:

Ներկայիս տնտեսական դժվարությունների դեմ պայքարելու համար հայ ընտանիքների որոշ մասն ընտրել է միջպետական տնտեսական տեղաշարժի ուղին (արտագնա աշխատանք): Այս ամենի հետևանքով ամուսնական զույգերի միջև առաջանում են հոգեբանական և բարոյական հիմնախնդիրներ, ինչպիսիք են՝ լարվածություն ներընտանեկան հարաբերություններում, երեխաների դաստիարակության հետ կապված խնդիրների առկայություն, տղամարդու և կնոջ սոցիալական դերերի գործառույթների կորուստ, որոնք քայքայում են ընտանիքի հիմքերը, կազմավորումն ու զարգացումը: Հայ ընտանիքն մեծ դեր է հատկացրել ոչ միայն նյութական բարեկեցության ապահովմանը, այլև կրթության, ապագայի հետ կապված խնդիրներին:

Սոցիալական գործառույթ.

Սոցիալական գործառույթի հիմնական նպատակն է ապահովել անձի սոցիալականացման համար անհրաժեշտ սոցիալական պայմանները: Երեխայի անձի ձևավորումն ու դաստիարակությունը տեղի է ունենում ընտանիք սոցիալական ինստիտուտի շնորհիվ:

Ընտանիքի առավել կարևոր ու միաժամանակ բարդ գործառույթներից կարելի է համարել հուզական–հոգեբանականը՝ բարոյահոգեբանական պայմանների ստեղծումը:

Սոցիալական ծանր կացության պատճառով այսօր շատ ընտանիքներ զրկում են իրենց երեխաներին լիարժեք կրթություն ստանալու հնարավորությունից: Արդյունքում երեխան աստիճանաբար հրաժարվում է դպրոցից, օտարվում ընտանեկան շրջապատից և հայտնվում փողոցում: Անապահով կյանքը խնդիր է նաև առողջության ապահովման, բուժհիմնարկներ այցելելու համար, որն էլ խոչընդոտում է լիարժեք կյանք ապահովելուն: Յուրաքանչյուր ընտանիքի բարեկեցության համար անհրաժեշտ է ունենալ սոցիալապես զարգացած պետություն, որը կնպաստի ֆիզիկապես և հոգեպես առողջ սերնդի ձևավորմանը, որոնք հիմք կհանդիսանան երկրի բարեկեցիկ և զարգացվածության բարձր մակարդակ ունենալու ապահովմանը:

Վերարտադրողական գործառույթ.

Ընտանիքի կարևորագույն ժառանգական գործառույթ է երեխաների ծնումն ու դաստիարակումը՝ **վերարտադրողական գործառույթը**: Մի շարք հեղինակներ (Ե.Գ.Բալաշկին, Է.Կ.Վասիլևա) այս գործառույթը բաժանում են երկու բաղադրիչի՝ մարդկային տոհմի շարունակման գործառույթ և երեխաների դաստիարակության գործառույթ:[4] Մարդու միակ և անփոխարինելի վերարտադրողն ընտանիքն է, որտեղ ապահովվում է նոր սերնդի վերարտադրությունը, մարդկային ցեղի շարունակությունը:

Այսօր նորաստեղծ ընտանիքների մի մասը հակված է քիչ երեխաներ ունենալուն՝ պատճառաբանելով նյութական դժվարությունները; Ընտանիքում շատ երեխաների առկայությունը միանգամայն բարենպաստ պայմաններ է ստեղծում

[4] Վ. Գրիգորյան, «Ժամանակակից ընտանիքի սոցիալ-մանկավարժական ներուժը» Մանկավարժություն, Եր., 2005, էջ 241.

նրանց միջև դաստիարակելու մարդկային այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են հոգատարությունը, ուշադրությունը, գթասրտությունը, կամեցողությունը, փոխօգնությունը, մարդասիրությունը, ընկերասիրությունը, կոլեկտիվի զգացումը: Մինչդեռ ընտանիքում միայն մեկ երեխայի դաստիարակությունը հաճախ նպաստում է նրա մեջ անհանդուրժողականության, եսասիրության, անհաշտության զարգացմանը:

Դաստիարակչական գործառույթ.

Երեխայի անձի ձևավորման հիմքը կերտում է ընտանիքը, որի համար անհրաժեշտ է ճիշտ դաստիարակություն: Երեխայի դաստիարակությունը սկսվում է նրա լույս աշխարհ գալու պահից սկսած: Հետևաբար, ընտանիքի կարևորագույն գործառույթներից մեկը **դաստիարակչական գործառույթն** է, որի իրականացմամբ մեծապես պայմանավորված է թե՛ երեխայի ապագան, թե՛ ընտանիքի ճակատագիրը և թե՛ ամուսինների երջանկությունը:

Ռուս փիլիսոփա Վ.Սոլովյովն նշել է, որ «ընտանիքը մարդու դաստիարակչական օրորոցն է»:[5] Ընտանիքն այն սոցիալական միջավայրն է, որտեղ սկսվում է երեխայի անձի ձևավորումը, սոցիալականացումը, համակողմանի և ներդաշնակ դաստիարակությունը: Երեխայի ծնողների վարքագծից, նրանց փոխհարաբերություններից, ներընտանեկան մթնոլորտից են կախված երեխայի դաստիարակության բովանդակությունն ու ձևերը: Ծնողների ջերմ, հոգատար վերաբերմունքը խթանում է մանկան անհատականության, նրա զգացմունքայնության ու կամքի զարգացմանը: Ամեն մի ընտանիք ունի դաստիարակչական իր անհատական մոտեցումները, ըստ որի էլ երեխան զգում է, թե իր արարքը դրակա՞ն, թե՞ բացասական ազդեցություն է ունենում հարազատների վրա: Ծնողը չի կարող երեխայի մեջ սերմանել այնպիսի որակներ, որոնցից ինքը զուրկ է, կամ արմատախիլ անել այնպիսիք, ինչպիսիք ինքն կիրառում է:

[5] Прохорова О.Г., Основы психологии семьи и семейного консультирования, М., 2005, стр. 31

ԳԼՈՒԽ 2. ԸՆՏԱՆԻՔԻ ԴԵՐԸ ԵՐԵԽԱՅԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ընտանիքը հիմնական հասարակական ինստիտուտներից մեկն է և պետության հիմքը, հենց ընտանիքն է կատարում աճող սերնդի սոցիալականացման կարևորագույն գործառույթը: Այստեղ երեխան սովորում է խոսել, մտածել, դաստիարակվում է՝ համաձայն հասարակության նորմերի, սովորույթների և արժեքների:

Ժամանակակից ընտանիքը այսօր դժվար շրջան է ապրում. այն ավանդական մոդելի ընտանիքից անցում է կատարում դեպի նոր մոդելի, փոխվում են ընտանեկան հարաբերությունների ձևերը, արժեքային համակարգերը, աճում է ամուսնալուծությունների թիվը, իջնում է ծնելիությունը, մեծանում է ամուսնությունից ծնված երեխաների թիվը, սրվում է հաշմանդամ երեխաների պրոբլեմը: Այս ամենը ստիպում է անհապաղ միջոցներ ձեռնարկել այս ինստիտուտի զարգացումն ամրապնդելու համար, որպեսզի երեխաները՝ ամենախոցելի օղակները, հնարավորինս քիչ տուժեն այդ փոփոխությունների արդյունքում:

Ընտանիքը հասարակության այն ինստիտուտն է, որն ապահովում է հասարակական կայունությունն ու համալրում է յուրաքանչյուր նոր սերունդ՝ դառնալով հասարակության ինքնավերարտադրման հիմնական միջոցը: Յուրաքանչյուր ժամանակաշրջանում կարևորվել և այսօր էլ կարևորվում է ընտանիքի կողմից երեխայի սոցիալականացման գործընթացի ապահովումը: Երեխայի սոցիալականացման առաջնային օղակը ընտանիքն է և հենց ընտանիքի անդամներն են հիմք հանդիսանում երեխայի ակտիվ սոցիալականացման գործընթացի ապահովման համար: Կարող ենք ասել, որ կարևորվում է ծնողի բարոյական կերպարը, նրա անձնական օրինակը, խոսքի և վարվելակերպի միասնությունը: Ծնողի անձնական օրինակը հանդես է գալիս որպես բարոյական փորձի փոխանցման յուրահատուկ ձև:

Իհարկե, արատավորված ընտանիքում հեղինակազրկված ծնողը չի կարող դրական ազդեցություն ունենալ իր երեխայի ակտիվ սոցիալականացման գործում: Անկասկած, ընտանիքում տիրող հարաբերությունները, հոգեբանական և բարոյական ընդհանուր մթնոլորտը իր անխուսափելի դրոշմն է թողնում երեխաների վարքի ու հոգեբանության ձևավորման վրա:

Սոցիալականացումը անհատի կողմից գիտելիքների, նորմերի, արժեքների որոշակի համակարգի յուրացումն է, որը թույլ է տալիս նրան դառնալ տվյալ հասարակության մեջ գործելու ունակ անձնավորություն: Սոցիալականացումը թույլ է տալիս մարդուն բավարարել իր պահանջմունքները, իրագործել հնարավորությունները, ընդունակությունները, փոխհարաբերությունների մեջ մտնել հասարակության մյուս անդամների, սոցիալական խմբերի, ինստիտուտների, կազմակերպությունների և ողջ հասարակության հետ: Մյուս կողմից, սոցիալականացումը որոշում է բուն հասարակության կայունությունը՝ ապահովելով նրա զարգացման անհրաժեշտ ժառանգությունը: Արդյունավետ սոցիալականացմանը նպաստում է սոցիալական միջավայրը:

Երեխայի ակտիվ սոցիալականացման մեջ մեծ է ծնողների դերակատարումը, կարևորվում է դրական միկրոմիջավայրը, որը կարող է երեխայի համար ապահովել լիարժեք պայմաններ ակտիվ սոցիալականացման գործում: Երեխայի ակտիվ սոցիալականացման համար ծնողները պետք է ստեղծեն բարենպաստ պայմաններ՝ սոցիալ-տնտեսական կայուն վիճակ, հուզական-հոգեբանական դրական միջավայր, կրթություն ստանալու հնարավորություն: Շատ հաճախ ընտանիքում տիրող խնդիրների պատճառով խաթարվում է երեխայի սոցիալականացման գործընթացը, երեխաների մոտ դադարում է հավատը ծնողների նկատմամբ:

Դեռահասության, պատանեկության տարիքի երեխաների վրա մեծ են հասակակիցների, աշխատանքային, մասնագիտական կոլեկտիվների ներգործությունները: Սոցիալականացման պայմաններին բնութագրական է այն, որ կարող են լինել բազմաթիվ վտանգներ, որոնք ի զորու են բացասական ազդեցություն թողնել անձի զարգացման գործընթացի վրա: Սա է պատճառը, որ օբյեկտիվորեն ձևավորվում են երեխաների, դեռահասների, երիտասարդների խմբեր, որոնք իրենց վրա են կրում սոցիալականացման անբարենպաստ պայմանների ազդեցությունը: Սոցիալականացման անբարենպաստ պայմանների ազդեցությունը դրսևորվում է իրական, պոտենցիալ և լատենտային ձևերով, որոնցից յուրաքանչյուրին բնորոշ է մարդկանց որոշակի խումբ:

ԳԼՈՒԽ 3. ՆԵՐԸՆՏԱՆԵԿԱՆ ՄԻՋԱՆՁՆԱՅԻՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԵՐԵԽԱՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆ

3.1. Ծնող-ծնող փոխհարաբերությունների դերը երեխայի սոցիալականացման գործընթացում

Ընտանիքը հասարակության մաս կազմող այն սոցիալական ինստիտուտն է, որտեղ տեղի է ունենում երեխայի սոցիալականացման առաջին փուլը, իսկ ծնողի դաստիարակությունը մեծ ազդեցություն է թողնում երեխայի անձի ձևավորման ողջ գործընթացի վրա: Երեխաների վրա ընտանիքի դաստիարակչական ներգործության բնորոշ առանձնահատկությունը նրա արդյունքների կայունությունն է: Այսինքն՝ վաղ տարիքում երեխաների դաստիարակության նկատմամբ ծնողների ճիշտ վերաբերմունքը հետագայում դրականորեն է անդրադառնում նրանց ուսումնական, աշխատանքային և հասարակական ակտիվության վրա: Ընտանեկան դաստիարակությունն ուժեղ ազդեցություն ունի երեխաների բազմակողմանի զարգացման գործում, որը երբևէ չենք կարող փոխարինել մեկ այլ ինստիտուտի կողմից իրականացվող դաստիարակչական գործընթացի հետ: Ճիշտ դաստիարակության միջոցով երեխաների մեջ կարող ենք ձևավորել այնպիսի մարդասիրական հատկանիշներ, ինչպիսիք են՝ աշխատասիրությունը, բարությունը, ազնվությունը, օգնության հասնելու պատրաստակամությունը, գթասրտությունը, հանդուրժողականությունը և այլն:

Ընտանեկան դաստիարակության անփոխարինելիությունն ու կարևորությունը, սակայն, չեն նվազեցնում հասարակության դաստիարակության դերը: Ընտանեկան դաստիարակությունն իր էությամբ կրում է հասարակական բնույթ, որը առանց հասարակության հոգածության, առանց պետության աջակցության չի կարող հասնել նշանակալի արդյունքների:

Ինչպես հին ժամանակներում, այնպես էլ այսօր յուրաքանչյուր ընտանիքի նպատակն է ապահովել իր սերնդի լիարժեք դաստիարակության գործընթացը, սակայն միշտ չէ, որ ծնողներն հասնում են իրենց առջև դրված նպատակին: Հաճախ մենք ականատես ենք լինում այնպիսի դեպքերի, երբ ծնողներն իրենց երեխաներին դաստիարակելու և նրանց համար կայուն ապագա կերտելու փոխարեն

խեղաթյուրում են իրենց երեխաների կյանքը,որի արդյուքում խաթարվում է սոցիալականացման գործընթացը:

Ծնող-ծնող փոխհարաբերությունների դերը շատ ավելի մեծ է երեխայի սոցիալականացման գործընթացի համար, քանի որ երեխայի սոցիալականացման հիմքերը դրվում են ընտանիքում ծնողների մասնակցությամբ: Այս ամենից կարող ենք հետևություն կատարել, որ երեխայի սոցիալականացման արյունավետությունը անմիջականորեն կապված է ծնողների միջև ձևավորված փոխհարաբերություններից:

Երեխայի լիարժեք սոցիալականացման համար անհրաժեշտ է, որ ծնող-ծնող փոխհարաբերություններում նրանց ցանկություններն ու նպատակները համապատասխանեն, մասնավորապես այն պարագայում՝ եթե դրանք վերաբերվում են երեխայի դաստիարակության գործընթացին: Երեխան վաղ մանկությունից ընկալում է ծնողների ապրելակերպը, նրանց միջև տիրող հարաբերությունները: Ընտանիքում երեխայի կյանքի բարոյահոգեբանական մթնոլորտը հսկայական նշանակություն ունի նրա բարոյական զգացմունքների ձևավորման համար: Երբ ծնողների միջև հաստատվում են ջերմ, բարիդրացիական հարաբերություններ, երեխան իրեն երջանիկ է զգում: Ծնողների սերը երեխայի մեջ ձևավորում է մարդկանց նկատմամբ բարի վերաբերմունք: Կոպտությունը երեխայի նկատմամբ նողկալի է: Երբեմն ծնողները երեսով են տալիս երեխայի համար գնած որևէ հագուստ, և այդ պարագայում այդ նվերները միայն տանջանք են պատճառում նրան: Երեխայի վրա շատ է ազդում մոր վերաբերմունքը հոր նկատմամբ, եթե մայրն արհամարհանքով է վերաբերվում ամուսնու հետ, ապա, բնական է, երեխան կհետևի նրա վարքին: Մանկական սիրտը կծկվում է ցավից, երբ հայրը կոպիտ է վերաբերվում մոր հետ: Վեճն ընտանիքում հոգեկան ցնցում է առաջացնում երեխայի մոտ ու խորը հետքեր թողնում: Եթե ծնողներն իսկապես սիրում են իրենց զավակին և ուզում են դաստիարակել նրան լիարժեք և համակողմանի ձևով, ապա պետք է ձգտեն փոխհամաձայնություն ստեղծել ընտանիքում՝ նպաստելով երեխայի սոցիալականացման գործընթացի արդյունավետությանը:

Ծնող-ծնող փոխհարաբերությունները մեծ դերակատարում ունեն երեխայի սոցիալականացման գործընթացում և յուրաքանչյուր ծնող պարտավոր է ամեն կերպ

նպաստել դրա արդյունավետությանը՝ գիտակցելով «ծնող» կոչման պարտավորվածությունը:

3.2. Ծնող-երեխա միջանձնային փոխհարաբերություններն ընտանիքում

Յուրաքանչյուր ընտանիքում դաստիարակությունն ունի իր ուրույն ձևն ու հնարավորությունները, ըստ որի էլ ձևավորվում է երեխայի վարքը: Ներկա ժամանակաշրջանում մեծացել են արտագնա աշխատանքի մեկնող տղամարդկանց, ինչու չէ նաև կանաց թիվը, որն էլ իր բացասական ազդեցությունն է թողել երեխայի դաստիարակության վրա: Այս երևույթը պատճառ է հանդիսացել նաև ընտանիքում կնոջ և տղամարդու դերերի փոփոխությանը: Երեխան, մեծանալով այն ընտանիքում, որտեղ բացակայում է տան տղամարդը, կորցնում է իրական տղամարդու վերաբերյալ իր պատկերացումը: Երեխայի դաստիարակությամբ զբաղվում է միայն մայրը, և որքան էլ այն լինի արդյունավետ, միևնույնն է, չի կարող լինել դրական, քանի որ նման պարագայում դաստիարակությունն լիարժեք համարել չենք կարող:

Ծնող–երեխա միջանձնային հարաբերությունները կազմում են ընտանիքում հարաբերությունների կարևորագույն և ամբողջական համակարգ: Ծնող-երեխա հարաբերություններում որպես հոգեկանի զարգացման և երեխայի սոցիալականացման կարևորագույն պատճառ կարելի է հաշվի առնել մի շարք փաստեր:[6]

Ծնողները պետք է սովորեն իրենց երեխաներին ծառայելու, նրանց աջակցելու, ճիշտ դաստիարակելու միջոցներն ու ուղիները: Միայն այս պարագայում ծնողները կարող են տալ պատշաճ դաստիարակություն:

Ծնողները պետք է ձգտեն հասկանալ և ընդունել իրենց երեխաներին այնպիսին, ինչպիսին նրանք կան, անհրաժեշտության դեպքում ցույց տալ ճիշտ ուղի: Ծնողները պետք է խստորեն սահմանափակեն երեխայի ազատությունն ու քայլերը այն պարագայում, երբ ինչ-որ բան սպառնում է երեխայի կյանքին և առողջությանը:

Ծնող-երեխա միջանձնային փոխհարաբերությունների ժամանակ ծնողները պետք է ստեղծեն այնպիսի մթնոլորտ, որը կնպաստի նրանց միջև վստահության դրսևորմանը: Ցանկացած պարագայում ծնողները պետք է հաշվի առնեն երեխայի տարիքային և անհատական առանձնահատկությունները:

[6] http://www.ache.am/index.php?option=com_content&view=article&id=316:2017-03-30-12-06-01&catid=36&Itemid=221&lang=hy

Ծնողների վարքը կարող է հանդիսանալ ուրույն չափանիշ, որի հիման վրա երեխաները համեմատում և կառուցում են իրենց վարքագիծը: Ծնող-երեխա փոխհարաբերությունների կառուցման մեջ ակտիվ կողմը հասուն մարդն է՝ ծնողը: Նա նպատակաուղղված կազմակերպում է փոխգործակցումը, ուղղորդում է այն՝ ենթարկելով կոնկրետ նպատակի: Կարևորն այստեղ այն է, թե ինչպիսի պայմանների վրա է ուշադրությունը կենտրոնացնում ծնողը հարաբերությունները կառուցելիս: Ծնող-երեխա հարաբերությունների և երեխայի մոտ անձնային որակների ձևավորման միջև գոյություն ունի ուղիղ կապ, քանի որ ընտանեկան միջավայրը ծնողների անհատական առանձնահատկությունների, ընտանիքի բնակության պայմանների և դաստիարակության ոճերի համակցություն է:

Երեխայի վրա ազդում են ոչ միայն կանխամտածված և նպատակաուղղված դաստիարակչական ներգործությունները, այլ ավելի շատ ծնողների վարքագծի առանձնահատկությունները: Ընտանիքը երեխայի համար ստեղծում է սոցիալական վարքի որոշակի մոդելներ: Գնահատելով այն, ինչ տեղի է ունենում հասարակությունում, երեխան առաջին հերթին հենվում է մոտ հարազատների հետ շփման փորձի վրա: Հետագայում նա իր փոխհարաբերություններն այլ անձանց հետ կառուցում է՝ զգալիորեն օգտագործելով ընտանեկան հաղորդակցման մոդելները: Ընտանիքում երեխաների սկզբնական սոցիալականացումն, հատկապես ծնող-երեխա հարաբերությունների ոլորտում, նմանատիպը չունի ռեֆերենտային խմբերի այլ տեսակներում: Եթե նույնիսկ կրթական համակարգը լիներ կատարյալ, այն չէր կարող երեխայի համար ապահովել այն հատուկ ծնողական հոգատարությունը և սերը, որը գոյություն ունի ընտանիքում:

Դաստիարակության գործում միշտ էլ, այսօր առավելապես, կարևորվել է երեխայի նկատմամբ ծնողի վերաբերմունքի ճիշտ դրսևորումը: Ծնողական սերն ու հոգատարությունը կենսական անհրաժեշտություն են փոքրիկի գոյապահպանման համար: Միաժամանակ անժխտելի է երեխայի անսահման սերը ծնողի նկատմամբ: Ընդ որում, եթե կյանքի առաջին տարիներին այդ սերն ապահովում է սեփական կյանքի անվտանգությունը, ապա հետագայում այն կատարում է երեխայի հոգեկան, զգացմունքային աշխարհի ապահովման, աջակցման գործառույթ: Հակառակ դեպքում մի կողմից անտարբերությունն ու եսասիրությունը, մյուս կողմից ծնողական սիրո

բացակայությունը հանգեցնում են ատելության, արհամարհանքի՝ ծանրացնելով երեխայի և ծնողի կյանքը: Ուստի միայն անկեղծ սերն ու փոխվստահությունն են ծնող-երեխա նորմալ փոխհարաբերությունների երաշխիքը, միայն փոխադարձ սիրո առկայության դեպքում է հնարավոր ձևավորել երեխայի մեջ բարոյական որակներ, հոգևոր արժեքներ: Ժամանակակից ընտանիքներում առավել տարածված են ծնող-երեխա փոխհարաբերությունների 4 տեսակ՝ հովանավորչություն, բռնակալություն, չմիջամտություն, համագործակցություն:[7] (Տես գծապատկեր 2, էջ 14):

Գծապատկեր 2.



Ծնող-երեխա փոխհարաբերությունների առաջին տեսակը **հովանավորչությունն** է. Դաստիարակության ընթացքում առավել տարածված սխալներից մեկը *գերհովանավորությունն է*, որը կարող է դրսևորվել տարբեր ձևերով՝

- երեխային ցուցաբերել չափից ավելի ուշադրություն,
- տեղի-անտեղի հովանավորել նրան,
- զրկել երեխային ինքնուրույնությունից, ինքնադրսևորման հնարավորությունից

և այլն:[8]

Այստեղ երեխան վաղ տարիքից հասկանում է, թե որքանով է ինքը կարևոր իր ծնողների համար և որքանով է սիրված նրանց կողմից: Սա մի կողմից բարձրացնում է ինքնագնահատականը, մյուս կողմից երեխայի վարքը հաճախ շրջանցում է ընդունված սոցիալական վարքի նորմերը: Արդյունքում այս երեխաները սովորում են, որ ծնողները պետք է ապրեն ու «ծառայեն» միայն իրենց ու բավարարեն միայն իրենց պահանջմունքները: Հակառակ պարագայում, իրենց համարելով խաբված ու անօգնական, հաճախ հակադրվում են ծնողներին՝ լքելով ընտանեկան օջախը: Այս երևույթը կարող է հանգեցնել նաև վարքագծային որոշ շեղումների, հատկապես, երբ

[7] Ա. Աշիկյան, «Ընտանեկան դաստիարակության ժամանակակից հիմնախնդիրները» ատենախոսություն:

[8] Նույն տեղում

հովանավորի դերում մայրն է և հովանավորում է տղա զավակին: Սրանով մենք չենք ժխտում երեխայի նկատմամբ ցուցաբերվող օգնությունն ու ուղղորդումը, այլ գտնում ենք, որ և՛ մեկը, և՛ մյուսը պետք է լինեն խելամիտ, կշռադատված, մանկավարժորեն՝ ճիշտ:

Ծնող-երեխա փոխհարաբերությունների երկրորդ տեսակը **բռնակալությունն** է. Այն արտահայտվում է ընտանիքում առանձին անդամի կամ անդամների կողմից սեփական առավելությունն ընդգծելով և նախաձեռնությունը միշտ իր ձեռքում պահելով: Ելնելով դաստիարակության նպատակներից, բարոյականության նորմերից, կոնկրետ իրավիճակներից՝ ծնողը պետք է և պարտավոր է որոշակի պահանջներ ներկայացնել իր երեխային՝ ընդունելով մանկավարժորեն և բարոյապես արդարացված որոշումներ: Սակայն նրանցից ոմանք նախընտրում են հրամանն ու պարտադրանքը՝ ընդգծելու սեփական առավելությունը: Հաճախ այս երևույթը հանգեցնում է նրան, որ երեխան ճնշմանը, պարտադրանքին, պատիժներին պատասխանում է իր միջոցներով՝ խաբեությամբ, նյարդային բռնկումներով, կեղծավորությամբ, երբեմն էլ՝ բացահայտ ատելությամբ: Իսկ եթե անգամ կոտրվում է երեխայի դիմադրությունը, ապա դրա հետ մեկտեղ կոտրվում են նաև անձնային այնպիսի որակներ, ինչպիսիք են՝ ինքնուրույնությունը, սեփական արժանապատվության զգացումը, սեփական հնարավորությունների և ուժերի նկատմամբ հավատը: Ցավոք վերոհիշյալ երևույթներն առավել մեծ տարածում են գտել հատկապես սոցիալապես անապահով ընտանիքներում, ուր հաճախ ընտանեկան անհաջողությունների ու դժվարությունների, ծագած անախորժությունների ու վեճերի պատճառը կապվում է երեխայի անձի հետ, ու նրա նկատմամբ ծնողի կիրառած բռնությունն ու կոպտությունը դառնում են առօրեական, սովորական երևույթ: Պատիժների ու բռնությունների պարբերաբար կրկնության արդյունքում երեխան կորցնում է սերն ու հավատը ծնողի նկատմամբ, դառնում մարդամերժ, խաթարվում է անձի լիարժեք ձևավորումը:

Այսօր գիտնականներն առանձնացնում են երեխայի նկատմամբ կիրառվող դաժան վերաբերմունքի 4 տարբերակ՝ ֆիզիկական բռնություն, սեռական բռնություն,

արհամարհանք, անտեսում /բարոյական ճնշում/, հոգեբանական բռնություն:[9] (Տես գծապատկեր 3, էջ 16)

Գծապատկեր 3.



Ֆիզիկական բռնություններ. Այսօր տարածված են ծնողների կողմից երեխայի նկատմամբ ֆիզիկական պատժի կիրառման հիմնական պատճառները.

- ընտանիքում նյութական ծանր պայմանները,
- բախումնային իրավիճակները, միջանձնային հարաբերություններում տարաձայնությունները,
- աշխատանքի բացակայությունը, ընկճվածությունն ու սեփական ես-ի նկատմամբ թերահավատությունը,
- սիրելի էակից բաժանումը կամ կորուստը,
- որոշ երիտասարդ ծնողների հոգեկան և ֆիզիկական անպատրաստվածությունն ընտանեկան կյանքին,
- երեխայի տարիքային առանձնահատկությունների, զարգացման գործընթացի մասին ծնողի տարրական գիտելիքների պակասը, չիմացությունը,
- բռնությունը, կոպտությունը որպես ընտանեկան ավանդույթ դիտելը՝ փոխանցված նախորդներից և այլն:

Հետևապես պատիժը կլինի արդյունավետ ու նպատակային միայն այն դեպքում, երբ երեխան հասկանա, որ իր արարքով անհանգստություն է պատճառել ոչ միայն ծնողներին, այլև՝ շրջապատին ու ձգտի շտկել, վերահսկել վարքը:

[9] Ա. Աշիկյան, «Ընտանեկան դաստիարակության ժամանակակից հիմնախնդիրները» ատենախոսություն:

Սեռական բռնություններ. Սեռական չարաշահումը ենթադրում է երեխային ստիպել կամ ներգրավել սեռական հարաբերությունների մեջ: Վերջիններս կարող են ենթադրել ինչպես ֆիզիկական շփում /կոնտակտ/՝ ներառյալ ստիպողական սեռական հարաբերություններ /օրինակ՝ բռնաբարություն, արվամոլություն/, այնպես էլ ներառել առանց կոնտակտի հարաբերություններ, ինչպիսիք են՝ երեխաների ներգրավումը պոռնոգրաֆիկ նյութեր դիտելու կամ արտադրելու, սեռական հարաբերություններ տեսնելու մեջ կամ երեխաներին քաջալերելու իրենց պահել սեռականորեն ոչ ընդունելի ձևերով:

Արհամարհանք, անտեսում /բարոյական ճնշում/. Այն այսօր ամենատարածված ձևերից մեկն է, որն արտահայտվում է ընտանիքում երեխայի նկատմամբ անտարբեր, ոչ բավարար ուշադիր վերաբերմունքի դրսևորմամբ: Տնական անտեսումն ու արհամարհանքը կարող են խոր ազդեցություն ունենալ երեխայի ինքնաճանաչման և ինքնագնահատման, նրա ապագա կյանքի վրա: Վերջինս կարող է լուրջ դժվարությունների հանգեցնել ինչպես հարաբերություններ ձևավորելու ու պահպանելու, աշխատանքում կայանալու պարագաներում, այնպես էլ շատ լուրջ խնդիրներ ունենալ լիարժեք մարդ և ծնող լինելու համար անհրաժեշտ վերաբերմունք և ունակություններ զարգացնելու հարցում: Այն ամենատարածված ձևերից մեկն է, քանի որ տնտեսավարման նոր համակարգում շատ ընտանիքների երեխաներ կամա թե ակամա հայտնվել են վերոհիշյալ կարգավիճակում: Պատճառներ կարելի է շատ թվարկել /ծնողի զբաղվածությունը, սեփական կարիերայով տարվելը, ինչպես նաև նյութական ծանր պայմանները, գերլարվածությունը, նյարդայնությունը, գործազրկությունը, ծնողներից մեկի հաճախակի բացակայությունը և այլն/, սակայն վերջնարդյունքում տուժողը երեխան է, երբ խեղաթյուրվում և աղավաղվում է ոչ միայն նրա անձի սոցիալականացման, այլև՝ դաստիարակության ողջ գործընթացը:

Հոգեբանական բռնություն. Մյուս տարածված ձևը հոգեբանական բռնությունն է, որն արտահայտվում է սպառնալիքներով, անհարկի դիտողություններով ու քննադատությամբ: Թեպետ դրանք ունեն խոսքային բնույթ, բայց խորապես ազդում են երեխայի ֆիզիկական ու հոգեկան զարգացման վրա: Հոգեբանական բռնությունը կարող է հանգեցնել հոգեբանական տրավմայի, դեպրեսիայի, տագնապի հետ կապված խնդիրների: Հոգեբանական բռնությունը կարող է նվազեցնել նաև երեխայի

ինքնագնահատականը, բացասաբար ազդել նրա ինքնահարգանքի վրա, սահմանափակի երեխայի ազատությունը: Եթե ծնողները ճիշտ են դաստիարակում իրենց երեխաներին, անհամեմատ ավելի փոքր է հավանականությունը, որ ապագայում նրանք ընտանեկան բռնության զոհ կդառնան:

Ծնող-երեխա փոխհարաբերությունների երրորդ տեսակը **չմիջամտությունն** է: Նման ընտանիքներում կարծես գործում է երկու աշխարհ՝ մեծեր և երեխաներ: Ընդ որում ոչ մի կողմն էլ հակված չէ խախտելու մյուսի «սահմանը»: Շատ հաճախ այսպիսի փոխհարաբերության հիմքում ընկած են ծնողների՝ որպես դաստիարակների պասիվությունը, երբեմն էլ նաև անտարբերությունն ու սառնությունը:Այս տեսակը նույնպես անընդունելի է, որովհետև հղի է վտանգներով և կարող է հանգեցնել վարքի մի շարք շեղումների:

Ծնող-երեխա փոխհարաբերությունների չորրորդ տեսակը **համագործակցությունն** է: Այն որպես փոխհարաբերությունների մի տարատեսակ նախատեսում է ընտանիքում ընդհանուր խնդիրների և նպատակների համատեղ կարգավորում, կազմակերպում, որոշում: Հատկապես այս իրավիճակում է հաղթահարվում եսասիրության, կամակորության ցանկացած դրսևորում, հատկապես այս ընտանիքներում է ձևավորվում կոլեկտիվ մտածողությունը: Նման ընտանիքներում երեխան ձեռք է բերում դիմացինին վստահելու, լսելու, իր տեսակետը հայտնելու, փոխօգնություն ակնկալելու, ինքնուրույն գործելու, սեփական ուժերին և հնարավորություններին հավատալու ունակություն: Ընտանիքում մշտապես առկա կյանքի այս պայմանները նպաստում են երեխայի անձի լիարժեք զարգացմանը:

Այսպիսով, երեխայի անձի ձևավորման գործում չափազանց մեծ և վճռորոշ դերակատարում ունեն ծնող-երեխա միջանձնային փոխհարաբերությունները: Ծնողների և երեխաների արդյունավետ փոխհարաբերությունները նպաստում են ներընտանեկան կապերի, ընդհանուր հետաքրքրությունների ձևավորմանն ու ամրապնդմանը, փոխընմռնմանը, փոխվստահությանը և փոխօգնությանը: Այս ամենի բացակայության դեպքում երեխաներն ունենում են ֆիզիկական, ճանաչողական, հուզական և վարքային զարգացման հապաղումներ:

3.3.Երեխա-երեխա միջանձնային փոխհարաբերություններն ընտանիքում

Երեխա-երեխա փոխհարաբերությունների առողջ և կայուն ձևավորման համար առաջնահերթ պատասխանատու են ծնողները: Երբ ընտանիքում տիրում է հավասար վերաբերմունք երեխաների նկատմամբ, ապա նման պարագայում գործ կունենանք առողջ երեխա-երեխա միաջանձնային փոխհարաբերությունների դրսևորման հետ:

Հաճախ ականատես ենք լինում այնպիսի դեպքերի, երբ ծնողները տարբերություն են դնում իրենց երեխաների միջև այն պատճառով, որ երեխաներից մեկը խելացի է, մյուսը՝ ոչ, մեկը գեղեցիկ է, մյուսը՝ ոչ, և նմանատիպ այլ պատճառներ, որոնք միայն փնովելու կարիք ունեն: Նման պարագայում խուսափել այն փաստից, որ երեխաների միջև կարող է առաջանալ բացասական մթնոլորտ, հնարավոր չէ:

Այն ընտանիքներում, որտեղ տիրում է նման մթնոլորտ, արդեն իսկ երեխաները չարանում են միմյանց նկատմամբ, նրանց հոգիներում տիրում է խանդի զգացում, հաճախ նաև թշնամանք: Ծնողների գերխնդիրն է դառնում վերաբերվել յուրաքանչյուր երեխային որպես յուրահատուկ անհատականության՝ ձևավորելով երեխաների միջև հարաբերությունների տարածք: Անհրաժեշտ է հիշել, որ ամեն բացասական գիծ կարող է վերածվել դրականի, եթե ցուցաբերվի ճիշտ մոտեցում:

Այսպիսով, երեխա-երեխա միջանձնային փոխհարաբերությունների ձևավորման համար պատասխանատու են ծնողները իրենց վերաբերմունքով ու վարքագծով, որ ցուցաբերում են իրենց երեխաների նկատմամբ:

3.4. Ավագ և միջին սերունդների փոխհարաբերությունների դերը երեխայի սոցիալականացման գործընթացում

Մի շարք ընտանիքաբաններ գտնում են, որ երեխայի կյանքում, նրա դաստիարակության գործընթացում պետք է ներգրավված լինեն ինչպես երեխայի ծնողները, այնպես էլ ավագ սերունդը, ի վերջո նրանք առավել փորձառու են, իմաստուն ու համբերատար երեխայի հետ շփման մեջ, որը երկար տարիների արդյունք է: Ծնողների և ավագ անդամների հետ շփումը նպաստում է երեխաների զարգացվածությանը, հանգեցնում մտահորիզոնի ընդլայնմանը:

Բոլոր ժամանակներում էլ ավագ սերնդի ներկայացուցիչները հանդիսացել են ընտանիքի հենասյուները: Ավագ սերունդը միանշանակ ունի իր ազդեցությունը ընտանիքի անդամների վրա, բայց որքանով է այն դրական կամ բացասական

կախված է ընտանիքում տիրող միջանձնային փոխհարաբերություններից: Ավագ սերնդի՝ տատիկ-պապիկների վերաբերմունքներն իրենց զավակների, թոռների նկատմամբ միանշանակ այլ բնույթ է կրում: Յուրաքանչյուր պարագայում նրանք ջանում են ամեն բան անել իրենց զավակների բարօրության համար, չեն խնայում ջանք ու եռանդ տալու այն, ինչի կարիքը նրանք ունեն: Իհարկե, այն փաստը, որ ավագ սերունդը փորձում է ամեն բան անել իր զավակների և թոռների համար լավ է, սակայն միշտ չէ, որ այն ունենում է դրական ազդեցություն: Լինում են դեպքեր, երբ երեխայի ծնողը չի ընդունում տատիկի կամ պապիկի չափից դուրս ուշադրությունը, հաճախ արգելում երես տալ երեխային, անհրաժեշտության դեպքում թույլ տալիս պատժել:

Այսօր նվազել է ընդլայնված ընտանիքների թիվը, և դրան փոխարինելու են եկել միակազմ ընտանիքները: Այս ամենի պատճառները միանշանակ տարբեր են: Այսօր շատ ամուսիններ ձգտում են ինքնուրույն ստեղծել իրենց ընտանիքը, իրենց տնտեսությունը, մի մասը գտնում է, որ ավագ սերնդի ազդեցությունը իրենց երեխաների դաստիարակության գործընթացում ունի բացասական ազդեցություն, որոշ դեպքերում ընտանիքում տիրող ոչ լիարժեք, հոգեբանորեն անկայում վիճակն է հանգեցնում վեճերի: Այն, որ երիտասարդները չեն ցանկանում ապրել ավագ սերնդի հետ, միանշանակորեն չենք կարող վերագրել իբրև բացասական ազդեցություն, քանի որ շատ դեպքերում երիտասարդները ցանկանում են նման պարագայում կայանալ, ինքնուրույն ստեղծել իրենց եկամուտը, սեփական տանիքը:

Մի շարք պարագաներում ծնողների և ավագ սերնդի միջև տիրող վիճաբանությունները իրենց հետքն են թողնում երեխայի հոգեկանի վրա, փոխվում է կարծիքը ընտանիքի անդամների նկատմամբ, երեխան չի գիտակցում՝ ով է ճիշտ, ով սխալ, ում վստահի, ում ոչ: Ցանկացած պարագայում ընտանիքի անդամները պետք է կարևորեն երեխայի անձը, գիտակցեն, թե ինչպիսի ազդեցություն կարող են ունենալ վիճաբանությունները երեխայի հոգեկանի վրա, և ամեն պարագայում հարթեն ընտանիքում տիրող վիճաբանությունները: Այսպիսով, երեխայի լիարժեք սոցիալականացման գործում իր ներդրում ունի ընտանքի յուրաքանչյուր անդամ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով «Ընտանիքի դերը երեխայի սոցիալականացման գործընթացում» թեման՝ հանգեցինք հետևյալ եզրակացության.

Ընտանիքը այն հիմնական և առաջնային միկրոմիջավայրն է, որը երեխայի սոցիալականացման գործընթացում կատարում է հիմնական, երկարաժամկետ և կարևորագույն դեր, որի նպատակն է աճող սերնդի առողջ և արդյունավետ սոցիալականացման ապահովումը, ինչպես նաև ինտեգրումը հասարակություն՝ որպես հասարակության լիարժեք անդամ:

Ներընտանեկան միջսերնդային փոխհարաբերությունները կարևոր դաստիարակող գործոններ են երեխայի անձի ներդաշնակ զարգացման և սեցիալականացման գործում և միևնույն ժամանակ խոցելի, եթե ընտանիքում առկա են միջանձնային բախումներ, կոնֆլիկտներ, ինչի արդյունքում խաթարվում և խեղաթյուրվում են երեխայի անձի ձևավորման, զարգացման և սոցիալականացման գործընթացները:

Ընտանեկան դաստիարակության նպատակն է ստեղծել ազգի և հասարակության համար զարգացած և կիրթ սերունդ: Այն ընտանիքներում, որտեղ բարոյահոգեբանական կայուն մթնոլորտն ապահովված է, երեխայի դաստիարակության գործում սխալները առավել հազվադեպ են, իսկ այն ընտանիքներում որտեղ խեղաթյուրված է բարոյահոգեբանական մթնոլորտը, ընտանիքի յուրաքանչյուր անդամ կարևորում է սեփական անձը, երեխայի համար լիարժեք դաստիարակություն ապահովել հնարավոր չէ:

Ծնողը, հանդիսանալով երեխայի իրավապաշտպան, պարտավոր է երեխայի նկատմամբ ցուցաբերել բարեխիղճ վերաբերմունք, մեծացնել երեխային սիրո, հարգանքի, վստահության մթնոլորտում, ինչպես նաև երեխայի համար ստեղծել բարեկեցիկ պայմաններ ապրելու, մտավոր և ֆիզիկական որակների զարգացման, առողջության ամրապնդման, ունակությունների և հետաքրքրասիրությունների դրսևորման համար, օգնել նրան կյանքի ճիշտ ուղին ընտրելու հարցում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գրիգորյան Վ.Վ. «Ժամանակակից ընտանիքի սոցիալ-մանկավարժական ներուժը», Եր., 2005թ, 241 էջ
2. Հարությունյան Ն.Կ., Ղազարյան Ա.Փ., Ղուկասյան Լ. Հ., «Սոցիալական մանկավարժություն», բուհական ձեռնարկ, Եր.,2017թ., ԵՊՀ հրատարակչություն, 334 էջ
3. Սուքիասյան Կ.Ս., «Ընտանեկան դաստիարակությունը որպես անձի ձևավորման ու զարգացման սոցիալական գործոն», Եր., 2006թ, 58 էջ
4. Սոխումլինսկի. Վ.Ա, Սիրտս նվիրում եմ երեխաներին,Եր., «Լույս», 1977թ., 317 էջ
5. Валахинович С. А., Преображение творчеством: пособие для педагогов и организаторов общеобразователных школ, Беларуская наука, 2003г., 91 стр.
6. Мудрик А.В.,Социальная педагогика, под ред. В.А. Сластенина, 3-е изд., испр.доп.-М.: издательский центр, „Академия”, 2000г., 200 стр.
7. Никитина Л.Е., Социальная педагогика. Учеб. пособие для вузов, М., 2003г., 272 стр.
8. Прохорова О.Г., Основы психологии семьи и семейного консультирования, М., 2005, стр. 31
9. http://www.ache.am/index.php?option=com_content&view=article&id=316:2017-03-30-12-06-01&catid=36&Itemid=221&lang=hy